or not we want it at all. How do we understand what we are thinking about? How do we understand our “I”? What do we associate this concept with and are there autonomous boundaries for this concept? We can find almost a few hundred definitions of the concept of “I”, each of which reveals a certain facet of this concept. We consider the following to be right: to understand what we can conceive, speaking of our "I", we need to find out what correlates our I. After all, one way or another we define this concept in relation to other psychic constructs. This concept is not self-sufficient, for its definition it needs some correlation. It seems to us that this specific construct design can be corporality.

Հոդվածը ներկայացվել է տպագրության 25.07.2019թ.,
ուղարկվել է գրախոսության 02.08.2019թ., ընդունվել է տպագրության 20.08.2019թ.:

ՀՏԴ 339.7(479.25)

ԿԱՐԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Համառոտագիր

Տնտեսության կայուն առաջընթացի կարևորագույն նախապայմաններից մեկը տնտեսական աճի ներառականության ապահովումն է, և այս առումով կարևոր դերակատարում ունի պետական ներդրումային քաղաքականության ուղղվածությունը, որի միջոցով հնարավոր է ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրումների հոսքերն ուղղել դեպի տնտեսության ռազմավարական, գիտելիքահեն և ռեսուրսախնայող ոլորտներ, որոնց զարգացումն իր հերթին կխթանի Հայաստանի տնտեսության առաջանցիկ զարգացումը: Այդ ուղղությամբ անհրաժեշտ են գիտականորեն հիմնավորված և համակարգային բարեփոխումներ՝ շուկայական տնտեսական համակարգի ինստիտուտների զարգացման, օրենսդրական դաշտի բարելավման և ներդրումային քաղաքականության նոր սկզբունքների ու մոտեցումների սահմանման ուղղությամբ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ *ներառական տնտեսական աճ, ներդրումային քաղաքականություն, տեղական և օտարերկրյա ներդրումներ, մարդկային կապիտալի զարգացում:*

Տնտեսության մեջ ներդրումային գործընթացների վրա ազդող կարևորագույն լծակներից է պետական ներդրումային քաղաքականությունը, որը կանխորոշում է դրանց կարգավորման, ինչպես նաև ներդրումների հոսքերի խթանման հիմնական ուղղություններն ու պայմանները: Ակնհայտ է, որ արդյունավետ ներդրումային քաղաքականության միջոցով հնարավոր է ձևավորել ներդրումային բարենպաստ միջավայր, որը ցանկացած երկրի

տնտեսության զարգացման և կայուն աճի ապահովման կարևոր նախապայմաններից է: Սակայն, միաժամանակ պետք է նշել, որ միայն ներդրումների բացարձակ ծավալային աճի շնորհիվ հնարավոր չէ լուծել տնտեսության կայունության և երկարաժամկետ զարգացման, ազգաբնակչության զբաղվածության, եկամուտների համահարթեցման, մարդկային կապիտալի զարգացման, շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների վերարտադրության, ինչպես նաև տնտեսության համար կարևոր և հեռանկարային այլ խնդիրներ: Վերջիններիս արդյունավետ լուծումը մեծապես կախված է տնտեսական աճի ներառականության ապահովումից: Համաձայն Տնտեսապես զարգացած երկրների կազմակերպության (OECD) կողմից տրված ձևակերպման՝ «Ներառական աճը այն տնտեսական աճն է, որն արդարացի բաշխվում է հասարակությունում և հնարավորություններ ստեղծում բոլորի համար»[9]: Այն կարող է բնորոշվել նաև որպես աճի գործընթաց, որի ժամանակ տնտեսական հարաբերությունների մասնակիցներին տրվում են հավասար հնարավորություններ, որի արդյունքում բոլորը շահում են:

Ներառական աճի կարևոր բաղադրիչներից են՝ մարդկային կապիտալում ներդրումները (կրթություն, առողջապահություն), նոր աշխատատեղերի ստեղծումը, պրոգրեսիվ հարկային քաղաքականությունը, սոցիալական պաշտպանությունը, տնտեսության մեջ խտրականության վերացումն ու մասնակցայնության բարձրացումը, ուժեղ տնտեսական ինստիտուտների ձևավորումը: Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի 2018 թվականի ներառական զարգացման ցուցիչի՝ աշխարհի ամենաներառական տնտեսությամբ երկիրը Նորվեգիան է, որին հաջորդում են Իսլանդիան, Լյուքսեմբուրգը, Շվեյցարիան, Դանիան: Ինչ վերաբերվում է Հայաստանին, ապա այն զարգացող երկրների ցանկում 45-րդն է 74 երկրների շարքում: Ընդ որում, Հայաստանն այս ցուցանիշով զիջում է իր հարևաններին՝ Վրաստանին, Ադրբեջանին, Թուրքիային, Իրանին[10]:

Վերոգրյալն, ինչ խոսք, պայմանավորված է նորանկախ պետության կազմավորումից ի վեր Հայաստանում ձևավորված տնտեսական հարաբերությունների և ներդրումային քաղաքականության առանձնահատկություններով, որոնք միտված չեն եղել տնտեսության ռազմավարական զարգացմանը և ներառականության ապահովմանը: Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ Հայաստանի տնտեսության մեջ մուտք գործող ֆինանսական ռեսուրսների հիմնական մասն ուղղվում է պետության անհետաձգելի ծախսերի իրականացմանը, այդ թվում՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Հայաստանում պետությունը եղել և շարունակում է մնալ իբրև բնակչությանը սատարող հաստատություն, որը դրամական ոչ բավարար միջոցները բաշխում է՝ բավարարելու սոցիալական ընթացիկ կարիքները և վճարելու տարբեր մակարդակների բազմաթիվ պետական ծառայողների աշխատավարձերը: Փաստացի, նման իրավիճակը ժառանգվել է նախկին խորհրդային ժամանակաշրջանից, որը բավարարում է ինչպես իշխանական վերնախավին, այնպես էլ բնակչության ճնշող մեծամասնությանը: Թերևս, հենց դրա հետևանքով երկրի

տնօրինության տակ գտնվող միջոցների առյուծի բաժինը տնտեսության զարգացման մեջ չի ներդրվում և չի վերարտադրվում: Ավելին, պետության առկա ֆինանսական միջոցները չեն բավականացնում անգամ բուն սոցիալական ոլորտի զարգացման մեջ ներդնելու համար, մասնավորապես առողջապահության, կրթության, գիտության և մշակույթի ժամանակակից օբյեկտների ձևավորման համար: Եվ սա այն պարագայում, երբ Հայաստանի ազգաբնակչությունն աստիճանաբար կրճատվելու միտում ունի:

Թեև գիտահետազոտական մշակումների և նորարարության մակարդակով Հայաստանը համարվել է ԽՍՀՄ ամենաառաջավոր հանրապետություններից մեկը, սակայն անկախացումից ի վեր պետության կողմից չապահովվեցին բավարար պայմաններ գիտնականների արդյունավետ գործունեության համար: Ուղեղների արտահոսքը մեր հանրապետությանը զրկում է առավել արժեքավոր ու դժվարությամբ համալրվող ազգային ակտիվից: Ակնհայտ է, որ Հայաստանում գիտությունը չի կարող զարգանալ միայն միջազգային օգնության կամ սփյուռքի ներկայացուցիչների պարբերական բարեգործության շնորհիվ. անհրաժեշտ են երկարաժամկետ և լայնամասշտաբ ներդրումներ, այլ ոչ մնացորդային սկզբունքով միջոցների հատկացում: Ավելին, տնտեսության ընդլայնողականացման պայմաններում գիտությունը չի կարող զարգանալ մեկուսացման մեջ. անհրաժեշտ է լիարժեքորեն ինտեգրվել նաև համաշխարհային գիտական հաստատությունների ցանցում:

Անդրադառնալով Հայաստանում ձևավորված ներդրումային քաղաքականությանը՝ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը անկախություն ձեռք բերելուց հետո սկսեց ձևավորել համապատասխան ինստիտուտներ, որոնք բնորոշ են ազատական տնտեսական համակարգին՝ որդեգրելով օտարերկրյա ներդրումների ներգրավման, այսպես կոչված, «բաց դռների քաղաքականություն»: Այդ համատեքստում իրականացվեցին մի շարք բարեփոխումներ բիզնեսի վարման պայմանների ապահովման և տնտեսական ենթակառուցվածքների ձևավորման ուղղությամբ: 1994 թվականին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը[1], որն, ինչ խոսք, դրական ազդեցություն ունեցավ հետագա տարիներին Հայաստանի տնտեսության մեջ ներդրումների ներգրավման գործում: Վերջինիս նպաստեցին նաև 2000-ական թվականներից սկսած համաշխարհային տնտեսության վերելքը և արտերկրից ստացվող դրամական փոխանցումների խոշորածավալ հոսքերը, որոնցով պայմանավորված մինչճգնաժամային հատվածում Հայաստանում զգալի աճել էր մասնավոր ներդրումների ծավալը, հատկապես բնակարանային շինարարության ոլորտում: Սակայն 2008 թվականին Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդակները տարածվեցին նաև Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների վրա, ինչն առաջ բերեց ներդրումային հոսքերի էական կրճատում, որն էլ, իր հերթին, բացասաբար անդրադարձավ տնտեսական աճի շարժընթացի և հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի վրա: Համաձայն Ռոչեստերի համալսարանի պրոֆեսոր Մ. Ագիյարի և Հարվարդի համալսարանի նրա գործընկեր Գ. Գոպինատի վերջին

հետազոտությունների՝ տնտեսական աճի տատանումները զարգացած և զարգացող երկրներում խիստ տարբերվում են[6], հետևաբար տնտեսական ճգնաժամի առաջացման գործոնները և դրա ազդեցությունները ևս առանձին երկրներում միմյանցից զգալիորեն կարող են տարբերվել: Մասնավորապես Հայաստանում համեմատաբար ավելի խորը անկման հիմնական պատճառը դեռևս 2000 թվականից ՀՀ-ում արձանագրվող տնտեսական աճի կառուցված-քային առանձնահատկություններն էին. 2000-2008 թվականներին տնտեսա-կան բարձր աճը ոչ արտահանելի հատվածի և հատկապես շինարարության ճյուղի աննախադեպ աճի արդյունքն էր, ինչը ՀՀ ներհոսող կապիտալ հոսքերի կտրուկ ավելացման և շինարարության ոլորտում այդ միջոցների կենտրոնացման հետևանքն էր: 2008 թվականի դրությամբ ներդրումների և ազգային խնայողությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում բարձրացավ՝ կազմելով համապատասխանաբար 43% և 32%, սակայն ճգնաժամի ընթացքում այս ցուցանիշը ՀՆԱ-ում կտրուկ իջավ՝ պայմանավորված հիմնականում մասնավոր դրամական փոխանցումների նվազմամբ, իսկ ազգային խնայողությունները նվազեցին ավելի մեծ չափով[5]: Ընդ որում, պետք է նշել, որ 2009 թվականին արձանագրված 14.1% անկման շուրջ 10.5 տոկոսային կետը բաժին էր ընկնում շինարարության ոլորտին[7]:

Թեև Հայաստանին հաջողվեց հաղթահարել ճգնաժամի հիմնական ազդեցությունները, սակայն հետճգնաժամային հատվածում ինչպես ներդրում-ների ծավալների, այնպես էլ տնտեսական աճի տեմպերը չվերականգնվեցին: Փաստացի, Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում և դրան հաջորդած ժամանակահատվածում Հայաստանում տնտեսական աճի դանդաղման միտումն ունեցել է հաստատուն երկարաժամկետ բնույթ՝ հանդի-սանալով օբյեկտիվ գործոնների երկարատև ազդեցության արդյունք:

Հայաստանում ձևավորված պետական կառավարման ոչ ներառական մոդելի պայմաններում տնտեսության մեջ արձանագրված անկայուն տնտեսական աճը փաստացի ավելի է խորացրել հասարակության մեջ եկամուտների անջրպետը՝ հատկապես հետճգնաժամային ժամանակահատ-վածում: Նշենք, որ Ջինիի գործակիցը, որը հասարակության շերտավորման վիճակագրական ցուցանիշն է և ցույց է տալիս եկամուտների բաշխման անհավասարության աստիճանը, զարգացման համադրելի մակարդակ ունեցող երկրների շարքում ամենաբարձրերից մեկն է մեր հանրապետու-թյունում: Ավելին, Համաշխարհային բանկի տվյալներով՝ Հայաստանում Ջինիի գործակիցը 2009-2018 թթ. անշեղորեն աճի միտում է ունեցել (2009-ին՝ 29,6 տոկոս, 2018-ին՝ 36 տոկոս): Համեմատության համար պետք է նշել, որ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում Ջինիի գործակիցը տատանվում է 0.25-ից մինչև 0.45-ի տիրույթում[4]: Վերոգրյալն, անշուշտ, վկայում է այն մասին, որ անցած տարիների ընթացքում Հայաստանի տնտեսական աճը ներառական բնույթ չի կրել:

Հայաստանում բարձր տեմպերով ներառական տնտեսական աճ արձանագրելու նպատակով մեծապես կարևորվում է անհրաժեշտ ծավալով ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրումների ներգրավումը,

որոնք նպատակաուղղված ներդրումային քաղաքականության արդյունքում կապահովեն տնտեսության ներառականության պատշաճ մակարդակ: Ելնելով վերոգրյալից՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համար առանձնակի կարևորություն ունեն հատկապես երկարաժամկետ ներդրումները, քանի որ կարճաժամկետ ներդրումները հիմնականում ուղղվում են տնտեսության մակարդակով մարտավարական խնդիրների լուծմանը, իսկ երկարաժամկետ ռազմավարական խնդիրների լուծման անհրաժեշտությունը ենթադրում է երկարաժամկետ ներդրումների առկայություն, որոնք էլ, իրենց հերթին, առաջ են բերում դրանց ձևավորման աղբյուրների, օգտագործման արդյունավետության, վերադարձելիության և այլ խնդիրների վերլուծության անհրաժեշտություն:

Այս առումով պետք է նշել, որ անցած տարիներին Հայաստանի կառավարության կողմից իրականացված ներդրումային քաղաքականությունն աչքի չի ընկել ռազմավարականությամբ, հիմնականում չի կրել համակարգային բնույթ և թելադրված է եղել իրավիճակային լուծումներով՝ առանց վերջիններիս հիմնավոր տնտեսագիտական գնահատականների: Մասնավորապես, 2015 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը», որի հիմնական նպատակն էր՝ բնութագրել հանրապետության ներդրումային միջավայրը, սահմանել ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները և նախանշել դրանց իրագործման համար անհրաժեշտ միջոցառումներն ու վերջիններիս ուղղությունները[3]: Նշված հայեցակարգի ընդունումը թեև լուրջ առաջընթաց քայլ էր մեր երկրում ներդրումային բարեփոխումների իրականացման ուղղությամբ, սակայն դրանում արտացոլված միջոցառումները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է լուրջ բարեփոխումներ իրականացնել ինչպես ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտում, այնպես էլ կառավարության տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններում: Գնահատելով Հայաստանում վերջին տարիներին իրականացված պետական մակրոտնտեսական քաղաքականությունը կարելի է նկատել, որ այն հիմնականում չի բխել ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային քաղաքականության հայեցակարգում ամրագրված սկզբունքներից ու մոտեցումներից, այսինքն՝ չի ապահովել բարենպաստ տնտեսվարման պայմաններ և գրավիչ ներդրումային միջավայր: Վերջինիս մասին են վկայում նաև տնտեսության մեջ առկա ներքոհիշյալ բացասական երևույթները, որոնք անմիջական բացասական ազդեցություն են ունենում ներդրումային միջավայրի և ներդրումային գործունեության զարգացման վրա, մասնավորապես՝ տնտեսական իրավիճակի անորոշությունների բարձ մակարդակը, մրցակցային միջավայրի անկատարությունը, ստվերային տնտեսության առկայությունը, գիտության և տնտեսություն արդյունավետ փոխգործակցության ցածր մակարդակը, ներդրումային գործունեությունը խթանող և տնտեսապես հիմնավորված արտոնությունների բացակայությունը, պետություն-գործարար հատված ակտիվ փոխգործակցության բացակայու-

թյունը, սեփականության իրավունքների և ներդրողների շահերի պաշտպանության ցածր որակը, մարդկային կապիտալի զարգացման ցածր մակարդակը, ազգաբնակչության եկամուտների գնալով խորացող անհավասարությունը և այլն:

2018 թվականի ապրիլին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները շրջադարձային քայլ հանդիսացան տնտեսության մեջ լայնածավալ բարեփոխումների մեկնարկի համար: Համաձայն 2019 թվականին հաստատված ՀՀ կառավարության ծրագրի՝ առաջիկա տնտեսական քաղաքականության հիմնական առանձնահատկությունը լինելու է ներառական տնտեսական աճի խթանումը, որը նախատեսում է պետության կողմից տնտեսական դաշտում համապատասխան պայմանների ապահովում՝ համախառն ազգային արդյունքի ձևավորման գործում և տնտեսական գործունեության ոլորտում առավելագույն թվով մարդկանց ներգրավելու համար[2]: Կարծում ենք, որ վերոհիշյալ խնդիրների հրատապ լուծման համար անհրաժեշտ է հիմնովին վերանայել Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պետական ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները: Ներդրումային միջավայրի բարելավումը համարելով երկրի տնտեսական առաջընթացի հիմնական գերակայություններից մեկը, անհրաժեշտ ենք համարում մշակել և նպատակաուղղված կերպով իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կնպաստեն ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորմանը՝ ռիսկերը նվազեցնելու ու ներդրումների իրականացման համար լրացուցիչ տնտեսական ու վարչարարական խթաններ ապահովելու միջոցով: Հայաստանում երկարաժամկետ ներդրումների խթանման համար անհրաժեշտ է ապահովել բաց և ազատական պայմաններով տնտեսություն՝ պետական ապարատի վարչարարության բարձր արդյունավետությամբ:

Ներկայումս Հայաստանի համար տնտեսության առաջնահերթ ճյուղերի տեխնոլոգիական զարգացումը և մարդկային կապիտալի աճը պետք է հանդիսանան ներդրումների խթանման և տնտեսության կայուն զարգացման ապահովման հիմնախնդիրների կարևոր լուծումներ: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ձևավորել համապատասխան պայմաններ տնտեսության զարգացման ներառական մոդելի կայացման ուղղությամբ, ինչի համար նախևառաջ Հայաստանի տնտեսությունը պետք է ապահովի տնտեսական զարգացման կայուն ցուցանիշներ: Այդ նպատակով անհրաժեշտ է ամբողջ ծավալով օգտագործել Հայաստանի տնտեսության նախկինում չգործարկված պոտենցիալ աճի հիմնական գործոնները: Հայաստանում մակրոտնտեսական քաղաքականության բոլոր ուղղությունների համար պետք է սահմանվեն հստակ ռազմավարություններ՝ որպես գերակա նպատակ սահմանելով երկրի տնտեսության երկարաժամկետ կայուն զարգացումը և ներառական աճը՝ տեղական և օտարերկրյա ներդրումների խթանման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ Հայաստանում ներառական տնտեսական աճին միտված ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները պետք է հանդիսանան.

- սեփականության և ներդրումների իրավական պաշտպանությունը,
- ներդրումային հարաբերությունների բոլոր մասնակիցների համար բարենպաստ, մրցակցային, ոչ խտրական և կանխատեսելի պայմանների երաշխավորումը,
- ՀՆԱ որակական կառուցվածքի բարելավումը՝ տնտեսության մեջ գիտատեխնիկական առաջընթացն ու նորարարությունների խթանման հաշվին,
- տնտեսության արտահանող ճյուղերի առաջնահերթ խթանումը, թողարկվող ապրանքների ու ծառայությունների մրցունակության բարձրացումը,
- փոքր և միջին ձեռնարկություններում ներդրումների խրախուսումը,
- կոլեկտիվ ներդրումային ինստիտուտների զարգացումը,
- մարդկային կապիտալի զարգացումը, այդ թվում՝ աշխատուժի որակի և արտադրողականության բարձրացումը,
- նորարարությունների խթանումը և գիտելիքահեն արտադրությունների զարգացումը,
- էներգախնայող, բնապահպանական և բարձր տեխնոլոգիական ոլորտներում ներդրումների խրախուսումը,
- հանրապետության մարզերի ներդրումային գրավչության բարձրացումը:

Վերոհիշյալ խնդիրների հրատապ լուծման համար պահանջվում են գիտականորեն հիմնավորված և համակարգային բարեփոխումներ՝ շուկայական տնտեսական համակարգի ինստիտուտների զարգացման, օրենսդրական դաշտի բարելավման և ներդրումային քաղաքականության նոր սկզբունքների ու մոտեցումների սահմանման ուղղությամբ:

Այսպիսով, տնտեսության կայուն և երկարաժամկետ աճի կարևորագույն նախապայմաններից մեկը՝ տնտեսական աճի ներառականության ապահովումն է և այս ուղղությամբ կարևոր դերակատարում ունի պետական ներդրումային քաղաքականության ուղղվածությունը, ինչի միջոցով հնարավոր է ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական ներդրումների հոսքերն ուղղել դեպի տնտեսության ռազմավարական, գիտելիքահեն և ռեսուրսախնայող ոլորտներ, որոնց զարգացումն իր հերթին կխթանի տնտեսության առաջանցիկ զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-115, ՀՀԳԽՏ 1994/14
2. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշում, 08.02.2019, N 65-Ն
3. «ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը»/ՀՀ կառավարություն, Երևան, 2015թ.
4. «Հարավային Կովկասի անհավասար հնարավորությունները», Համաշխարհային բանկի զեկույց, 2018թ.

5. **Սարգսյան Կ. Ս.**, Ներդրումների ներգրավման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ կայուն տնտեսական աճի համատեքստում/ Կաճառ գիտական տարեգիրք, 2017, ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն, էջ 115-119
6. **Agiyar M., Ghopenhat Gh.**, Economic Crisis: Indonesia: Indonesia Agrees to Revised IMF Economic Plan; Political and Economic Upheaval Continues// Journal of Economics, 2007, 9, pp. 60-69
7. **Sargsyan K. S**, The modern challenges of fiscal and monetary policy in the Republic of Armenia/Economic Thought Jornal-(2) 2017, Bulgarian Academy of Sciences, Economic research institute in English and Bulgarian (pp. 131-144, 115-130)
8. https://www.oecd.org/inclusive-growth/
9. https://www.weforum.org/reports/the-inclusive-development-index-2018

КАРЕН САРГСЯН
кандидат экономических наук, доцент

ПРОБЛЕМЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИНВЕСТИЦИОННОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ ИНКЛЮЗИВНОГО ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА

Одной из важнейших предпосылок устойчивого экономического прогресса является обеспечение инклюзивного экономического роста, и в этом отношении важную роль играет государственная инвестиционная политика, которая позволит направлять как иностранные, так и местные инвестиционные потоки в стратегические, наукоемкие и ресурсосберегающие отрасли экономики, развитие которых, в свою очередь, будет стимулировать поступательное развитие экономики. В этом направлении необходимы научно обоснованные и систематические реформы для развития институтов рыночной экономики, совершенствования правовой базы и определения новых принципов и подходов к инвестиционной политике.

KAREN SARGSYAN
PhD in Economic Sciences, Associate Professor

THE ISSUES ON IMPROVING INVESTMENT POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF ENSURING INCLUSIVE ECONOMIC GROWTH

One of the most important prerequisites for sustainable economic progress is the promotion of inclusive economic growth and in this regard public investment policies are important which will allow both foreign and local investment flows to be channeled into strategic, knowledge-intensive and resource-saving sectors of the economy, whose development in turn will stimulate sustained economic development. In this respect, there is a need for scientifically sound and systematic reforms to develop market economy institutions, improve the legal framework and define new principles and approaches to investment policies.

Հոդվածը ներկայացվել է տպագրության 03.10.2019թ.,
ուղարկվել է գրախոսության 08.10.2019թ., ընդունվել է տպագրության 21.10.2019թ.: